«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Նախադպրոցականի կարողունակությունների ձևավորման հիմնահարցը

Դաստիարակ՝ Կարինե Ղահրամանյան

Մանկապարտեզ՝ «Գրիբոյեդովի մանկապարտեզ» ՀՈԱԿ

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

1. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇՉԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ.....6

2. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....9

Հետազոտության ընթացքը.....14

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....30

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....31

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչ է կարողունակությունը: Կարողունակությունը անհատի համալիր բնութագրիչ է. այն գիտելիքների, հմտությունների, վերաբերմունքի և արժեքների համակարգ է, որը թույլ է տալիս այս կամ այն ոլորտում հաջողությամբ լուծել որոշակի խնդիրներ: Համաձայն այս սահմանման՝ եթե որևէ մեկը հավակնում է կարողունակ լինել որևէ բնագավառում, ապա նա պետք է տիրապետի այդ բնագավառին բնորոշ որոշակի գիտելիքների, հմուտ լինի այդ բնագավառում որոշակի գործունեություն ծավալելու, պետք է ունենա արժեքային որոշակի համակարգ և կարողանա իր դիրքորոշումն արտահայտել այդ բնագավառի որոշակի հարցադրումների, երևույթների վերաբերյալ: Կարողունակությունը չի կարելի համարել վերջնականորեն ձևավորված որևէ արդյունք: Վերջինիս ձևավորումն անընդհատ գործընթաց է, որի ժամանակ այն անընդհատ կարող են կատարելագործվել: Կարողունակությունների ձևավորումը սկսվում է վաղ մանկությունից և շարունակվում է ամբողջ կյանքի ընթացքում:

«Կարողունակություն» եզրույթը մանկավարժական գրականության մեջ սկսել է շրջանառվել անցած դարի 70-80-ական թվականներից, երբ արևմտյան երկրներում և ԱՄՆ-ում սկսեցին լրջորեն քննադատել կրթության նպատակներն ու բովանդակության ձևավորման մոտեցումները: Արագ փոփոխվող կյանքը, գիտության և տեխնիկայի շարունակական աճը մասնագետներից պահանջում էին աշխատանքային շուկային արագ հարմարվելու ճկունություն: Ամերիկյան հետազոտողները պարզեցին, որ շատ հաճախ մարդկանց ինտելեկտի բարձր աստիճանը մասնագիտական գործունեության ժամանակ մնում է չիրացված: Այդ ժամանակներում լայն տարածված IQ թեստերը, որոնցով չափում էին մարդու իմացական մակարդակը, չէին երաշխավորում նրա մասնագիտական հաջող գործունեությունը: Թեստը տալիս էր բարձր արդյունք, մինչդեռ իրական կյանքում մարդը ցածր արդյունավետությամբ էր աշխատում:

Ամերիկացի հետազոտողները կատարեցին բարձր արդյունավետության հասած մարդկանց վարքի, գործունեության ուսումնասիրություններ և արդյունքում ձևակերպեցին նրանց ընդհանրությունները միավորող որակների համալիր խումբ, որն անվանեցին կոմպետենցիա:

Այդ ժամանակ արդեն պարզ դարձավ, որ միայն նեղ առարկայական դաշտում գիտելիքների հաղորդումը և հմտությունների ձևավորումը բավարար չէ, այլ անհրաժեշտ է հանրակրթության նպատակների առավել լայն գիտակցում: Հանրակրթական համակարգին նոր պահանջներ սկսեցին թելադրվել գործարար շրջանակներից: Դրա պահանջն առաջացավ հատկապես աշխատանքային շուկայի կառուցվածքի փոփոխությամբ: Պարզ դարձավ, որ հանրակրթությունը պետք է ձևավորի այնպիսի կարողունակություններ, որոնք անհրաժեշտ են յուրաքանչյուր անհատի՝ արագ փոփոխվող հասարակությունում հաջողությամբ կազմակերպելու իր առօրյա կյանքն ու գործունեությունը: 1990-ականների վերջին և 2000-ականների սկզբին առանցքային կարողունակությունների ձևավորմանը նպատակաուղղված կրթական ծրագրեր սկսեցին կառուցել արագ զարգացող նորարարական տնտեսություններ ունեցող այնպիսի երկրներ, ինչպիսիք են Ֆինլանդիան, Ավստրալիան, ԱՄՆ-ի առանձին նահանգներ, Կանադան, Հարավային Կորեան, Շոտլանդիան, Իռլանդիան, Սինգապուրը: Ավելի ուշ այդ շարժմանը միացան Չինաստանը, Ճապոնիան, Գերմանիան, Հոլանդիան, Լատինական Ամերիկայի և հետխորհրդային երկրները: Հետևելով զարգացման ընդհանուր միտումներին՝ յուրաքանչյուր երկիր, ելնելով իր մշակութային, պատմական, սոցիալ-ժողովրդագրական, տնտեսական առանձնահատկություններից, այդ ուղղությամբ շարժվում է իր նախընտրած ճանապարհով:

Չնայած այս հարցում միասնական մոտեցումը բացակայում է, սակայն մի բան հստակ է՝ առանձին առարկաների բովանդակության վրա կառուցված կրթական մոդելն իր դիրքերն արագորեն զիջում է առանցքային կարողունակությունների վրա հիմնված կրթական մոդելին:

Բոլորի համար պարտադիր պահանջների շարքում նեղ առարկայական գիտելիքներից և գործնականում դրանք կիրառելու կարողություններից բացի, որոշիչ դեր են սկսում խաղալ համապիտանի կարողունակությունները, որոնք աստիճանաբար դառնում են համընդհանուր գրագիտության պարտադիր բաղադրատարրեր:

Կարողունակությունները նախադպրոցական տարիքի երեխաների կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, հմտությունների, արժեքների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևեր են:

2021 թվականի մայիսի 13-ին Հայաստանի Հանրապետության կառավարությունը հաստատել է նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը: Չափորոշիչի հիմքում նախադպրոցական տարիքի երեխաների կարողունակությունների վրա հիմնված մոտեցումն է:

Սույն աշխատանքի արդիականությունը պայմանավորված է նախադպրոցական կրթության պետական չափորոշչի ներդրման հետևանքով նախադպրոցական տարիքի երեխաների մոտ համապատասխան կարողունակությունների ձևավորման կարևորությամբ և անհրաժեշտությամբ:

Աշխատանքի նպատակն է նախադպրոցական կրթական չափորոշիչի ներդրմանն ընդառաջ ներկայացնել նախադպրոցական տարիքի երեխաների մոտ համապատասխան կարողունակությունների ձևավորման կարևորությունը և անհրաժեշտությունը: Այս նպատակի ձեռքբերման համար առանձնացրել ենք հետևյալ խնդիրները.

Ներկայացնել նախադպրոցական կրթության պետական չափորոշիչի հիմնական դրույթները

Ներկայացնել նախադպրոցական տարիքի երեխաներից ակնկալվող կարողունակությունները

1.ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇՉԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը հանրակրթության պետական կրթական չափորոշիչի բաղկացուցիչ մաս կազմող նորմատիվ իրավական ակտ է, որը սահմանում է նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման կրթական ծրագրերի բովանդակությունը, նրանց ներկայացվող վերջնարդյունքները, ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը, նախադպրոցական տարիքի երեխաների կրթության և զարգացման վերջնարդյունքների ապահովման հիմքերը:

Չափորոշիչը ներառում է՝

1) ուսումնադաստիարակչական հիմնական բնագավառները, կրթական ծրագրի բաղադրիչները և դրանց սահմանման մանկավարժահոգեբանական սկզբունքները.

2) երեխաների ուսումնական, խաղային բեռնվածության առավելագույն չափը կամ դրանց հարաբերակցությունը.

3) երեխաների զարգացման ընթացքի և առաջադիմության մակարդակի դիտարկման ձևերը.

4) նախադպրոցական ուսումնական հաստատություններում ներառական և երեխայակենտրոն միջավայրի չափանիշները, որոնք հաստատում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը.

5) նախադպրոցական ուսումնական հաստատություններում երեխայի անվտանգ միջավայրի և աղետներին պատրաստվածության չափանիշները:

Չափորոշիչը հանդիսանում է երեխայակենտրոն կրթության հիմքը. հնարավորություն է ընձեռում արձագանքելու երեխաների կարիքներին և հետաքրքրություններին, հարգելու յուրաքանչյուր երեխայի անձը, խթանելու համատեղ ուսումնառության գործընթացը:

Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի իրականացումը նախադպրոցական ուսումնական հաստատությունների կողմից պարտադիր է՝ անկախ դրանց կազմակերպաիրավական ձևից և ենթակայությունից:

Ըստ չափորոշչի, մշակվում են միջին և բարձրագույն մասնագիտական հաստատությունների նախադպրոցական ֆակուլտետների (բաժինների) ուսումնական ծրագրեր և վերապատրաստումների թեմատիկ պլաններ, ծնողական կրթության ծրագրեր:

Նախադպրոցական տարիքի երեխաների կրթության բովանդակությունը հիմնականում ներառում է զարգացման հետևյալ ոլորտները՝

1) շարժողական ոլորտ.

2) խոսքի և հաղորդակցական ոլորտ.

3) հուզական, սոցիալ-անձնային ոլորտ.

4) իմացական ոլորտ.

5) ինքնասպասարկման, անվտանգության, առողջ ապրելակերպի ոլորտ:

Կրթության բովանդակության՝ չափորոշչով սահմանված հասանելի մակարդակը ապահովվում է կրթության բաղադրիչների միջոցով, որոնք իրականացվում են գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորմամբ՝ երեխաների զարգացման ոլորտներին և ուղղություններին համապատասխան կազմված, կրթության պետական կառավարման լիազոր մարմնի կողմից հաստատված Նախադպրոցական կրթական ծրագրի համաձայն:

Նախադպրոցական կրթական ծրագրերի բովանդակությունը ներկայացվում է զարգացման հետևյալ հիմնական բնագավառներով՝

1) խոսքի, լեզվամտածողության, տրամաբանության, գրաճանաչության, ընդհանուր ճանաչողական զարգացում.

2) հուզակամային և սոցիալ-անձնային զարգացում.

3) շարժողական և ֆիզիկական զարգացում.

4) աշխարհաճանաչման ինքնուրույնության, ստեղծագործական ունակությունների և հնարամտության զարգացում.

5) բարոյական, ազգային, էկոլոգիական, իրավական և սեռային գիտակցության և մտածելակերպի զարգացում՝ արժեքային հիմունքների փոխանցմամբ:

Կրթական ծրագրերը պետք է նպատակաուղղված լինեն՝

1) հետաքրքրասիրության զարգացմանը՝ որպես նախադպրոցականի ճանաչողական (իմացական) ակտիվության գործոնի.

2) երեխայի ընդունակությունների զարգացմանը.

3) ստեղծագործական երևակայության զարգացմանը.

4) հաղորդակցական հմտությունների ձևավորմանը:

2. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կարողունակությունները նախադպրոցական տարիքի երեխաների կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքների, հմտությունների, արժեքների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևեր են:



Նախադպրոցական տարիքի երեխաների կարողունակությունները ձևավորվում են ուսուցման և դաստիարակության կազմակերպման միջոցով:

Նախադպրոցական կրթության կարողունակություններն են՝

1) լեզվական և հաղորդակցական կարողունակություն՝

երեխան տիրապետում է գրական հայերենին, հաղորդակցվում տարբեր իրավիճակներում և միջավայրերում, դրսևորում խոսքային և ոչ խոսքային ակտիվություն՝ մասնակցություն ունենալով հասարակական կյանքին: Ընդունակ է ճանաչել բանավոր ներկայացվող երևույթները, ըմբռնել, նկարագրել, մեկնաբանել դրանք, ներկայացնել բացատրություններ: Երեխան ունակ է կողմնորոշվել լեզվական միավորներում՝ հնչյուն, բառ, նախադասություն, ունի տարրական պատկերացումներ վանկի, հնչյունի և տառի մասին, ինքնուրույն ձևակերպում է սեփական մտքերը՝ ազատ

և կապակցված արտահայտելով կարծիք, վերաբերմունք որևէ երևույթի մասին: Այլ մարդկանց հետ հաղորդակցության մեջ պատկերացնում է տեղեկատվական տեխնոլոգիաների դերը և մեծահասակների օգնությամբ կիրառում դրանք.

2) ճանաչողական և մոտիվացիոն կարողունակություն՝

երեխան, իր տարիքին համապատասխան, ընդունակ է պատճառահետևանքային կապեր տեսնել երևույթների, իրադարձությունների միջև, ճանաչել առարկաների և օբյեկտների կապերը, հարաբերությունները, նոր խնդիրներ լուծել: Դրսևորում է ակտիվություն, հետաքրքրասիրություն, ճանաչողական հետաքրքրություն աշխարհի, առարկաների և երևույթների, ինչպես նաև հարաբերությունների կառուցման հանդեպ: Երեխան հաճույքով (ակտիվ) ներգրավվում է գործունեության տարբեր ձևերի, մտավոր տարբեր գործողությունների, նոր բացահայտումների մեջ.

3) ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն՝

երեխան ճանաչում է իր արտաքին առանձնահատկությունները, ձեռք է բերում սեռադերային պատկերացումներ: Երեխան ունի պատկերացում սեփական հնարավորությունների մասին, վստահություն սեփական ուժերի և կարողությունների հանդեպ: Ընդունակ է ինքնակազմակերպվելու, դրսևորում է ինքնուրույնություն և ինքնասպասարկման հմտություններ: Գործողություններում դրսևորում է նպատակաուղղվածություն և կենտրոնացվածություն: Երեխան ճանաչում է սեփական և այլոց հույզերը, կարողանում է կառավարել սեփական հույզերը: Ճանաչում է մեծահասակների և հասակակիցների փոխհարաբերություններում սահմանված վարքային կանոնները և դրսևորում է սոցիալապես ընդունված նորմերին համապատասխան վարք: Շփման մեջ նախաձեռնող և կառուցողական է, դրսևորում է ընկերակցելու, համագործակցելու հմտություններ.

4) ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն՝

նախադպրոցական տարիքում երեխան տիրապետում է բարեվարքության և սոցիալական արդարության պարզագույն կանոններին. դրսևորում է հարգանք և հոգատարություն շրջապատի հանդեպ, գնահատում է արարքների բարոյական

ուղղվածությունը: Ճանաչում է հայրենիքը, Հայաստանի խորհրդանիշները (դրոշ, զինանշան, օրհներգ), դրսևորում է սեր և նվիրվածություն հայրենի երկրի հանդեպ: Ունի տարրական պատկերացումներ սեփական իրավունքների ու պարտականությունների մասին.

5) թվային և մեդիա կարողունակություն՝

երեխան ունի տարրական պատկերացումներ մեդիայի վերաբերյալ, կողմնորոշվում է մեդիա բազմազանության մեջ, մեծահասակի աջակցությամբ գնահատում է ներկայացված տեղեկատվությունը, այն համադրում սեփական պատկերացումներին՝ դրսևորելով քննադատական և ընտրողական մոտեցում: Երեխան կարողանում է օգտվել մեդիա տարրական գործիքներից՝ միևնույն ժամանակ հասկանալով դրանց կիրառման հնարավոր վտանգները և այդ հարցում սեփական պատասխանատվությունը: Երեխան դրսևորում է առարկաների, երևույթների մոդելավորման և ստեղծագործական կարողություններ, տարբերում է իրական և վիրտուալ աշխարհները, հասկանում դրանց տարբերությունները.

6) մշակութային կարողունակություն՝

երեխան կարողանում է գնահատել գեղեցիկը, ճանաչում և վերլուծում է հանրահայտ հայ և արտասահմանյան մանկագիրների գեղարվեստական ստեղծագործությունները, ճանաչում է ազգային և համաշխարհային մշակութային նմուշների ինքնատիպությունը: Դրսևորում է ընդգծված հետաքրքրություն գեղարվեստական գործունեության հանդեպ, ունակ է երաժշտության, կերպարվեստային գործունեության տարբեր տեսակների, ազգային տոների ու ավանդույթների միջոցով արտահայտելու սեփական հույզերը, զգացմունքներն ու տպավորությունները.

7) մաթեմատիկական և տեխնիկական կարողունակություն՝

երեխան կարողանում է կատարել պարզ մաթեմատիկական գործողություններ, համեմատում, հետազոտում է առարկաները և երևույթները, գտնում է տարբեր խնդիրների լուծումներ, ճանաչում է թվանշանները, տիրապետում է նախաթվային և թվային հասկացություններին. երեխան կարողանում է որոշել առարկաների քանակը,

համեմատել դրանք ըստ մեծության, չափի, ձևի և գույնի, տարբերակել մասը և ամբողջը, երկրաչափական պատկերներն ըստ հատկանիշների: Կարողանում է առարկաները տարբերակել նաև ըստ նյութի: Ցուցաբերում է հետաքրքրություն սարքավորումների հանդեպ, կարողանում է ծանոթ տեխնիկական հանգույցներից կառուցել նոր համադրություններ.

8) տնտեսական կարողունակություն՝

երեխան կարողանում է համարժեք ճանաչել և վերլուծել մեծերի աշխատանքը և դրանից ստացված արդյունքները: Գիտի տարբեր մասնագիտությունների անվանումներ և դրանց առանձնահատկությունները: Ցուցաբերում է տնտեսական պարզ հասկացությունների իմացություն, գիտի իր հետ առնչվող առարկաների ձեռքբերման եղանակները, կիրառում է տնտեսական պարզ բառապաշար: Երեխան հասկանում է շրջապատող աշխարհի և բնության երևույթների միասնականությունն ու փոխկապակցվածությունը: Ճանաչում է բնության երևույթները, գիտի բնության առանձին երևույթների վտանգների, դրանցից պաշտպանվելու մասին, անվտանգ վարքագիծ է դրսևորում բնության առանձին երևույթների՝ կայծակի, ամպրոպի, կարկուտի, անձրևի, մառախուղի ժամանակ: Ունի տարրական պատկերացումներ շրջակա միջավայրի և դրա պահպանման վերաբերյալ: Կարողանում է նկարագրել մարդու և տնտեսության ազդեցությունը բնության վրա: Հասկանում է շրջակա միջավայրի պահպանման գործում սեփական դերը, նշանակությունը և մասնակցում է այդ գործընթացում.

9) ֆիզիկական կուլտուրայի կարողունակություն՝

երեխան պատկերացում ունի ֆիզիկական վարժությունների առողջարարական նշանակության, առողջ սննդի, առողջ ապրելակերպի վարման հիմնական կանոնների՝ օրգանիզմի կոփման, օրվա ռեժիմի, հիգիենիկ կանոնների, ճիշտ կեցվածքի պահպանման մասին: Ընկալում է ֆիզիկական վարժությունների ճիշտ կատարման ձևը, ճանաչում և տարբերում է ամառային և ձմեռային մարզաձևերը: Ընդհանուր պատկերացում ունի շարժողական ընդունակությունների, տարածված մարզաձևերի, մարզագույքի, սպորտային հանդերձանքի մասին, ճանաչում է հայ և այլազգի անվանի

մարզիկներին: Երեխան ընդունակ է ճիշտ կատարելու մարմնամարզական, աթլետիկական վարժություններ, տարաբնույթ շարժողական գործողություններ շարժախաղերում, մարզախաղերում, շարժողական ակտիվության այլ ձևերում: Դրսևորում է անհրաժեշտ ֆիզիկական պատրաստվածություն և պահպանում է առողջ ապրելակերպի վարման կանոնները: Երեխան ինքնուրույն կատարում է նմանողական շարժումներ, ընդհանուր զարգացնող վարժություններ՝ առանձին, զույգերով, մարզագույքով: Վարժությունների կատարման ընթացքում, շարժախաղերում, թիմային խաղերում դրսևորում է ինքնուրույնություն, կարգապահություն, կամք, պատասխանատվություն, համագործակցություն, վճռականություն, փոխօգնություն, ընկերասիրություն, նախաձեռնողականություն:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Հետազոտական աշխատանքը անցկացվել է «Գրիբոյեդովի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տարատարիք խմբում: Որպես թեմա ընտրվեց «Աշուն» թեման: Պլանավորվեց իրականացնել շրջակա միջավայրի դիտարկում, էկոլոգիայի, բնության հետ

ծանոթացում: Մնացած բոլոր պարապմունքների ընթացքում (խոսքի զարգացում, տարրական մաթեմատիկական պատկերացումներ, երաժշտություն, ծեփ, ապլիկացիա) շարունակվեց առաջադրված թեման: Ստորև ներկայացնեմ պարապմունքների մի քանի օրինակ:

Պարապմունք 1

Խոսքի զարգացում

Թեմա՝ «Աշուն»

Խնդիրներ՝ Ամրապնդել երեխաների գիտելիքները բնության մեջ տեղի ունեցող սեզոնային փոփոխությունների մասին, ընդհանրացնել և համակարգել նրանց պատկերացումները աշնան բնութագրիչ հատկանիշների մասին, ծանոթացնել նրանց բնության օրացույցին: Դաստիարակել սեր հայրենի բնության հանդեպ, հարստացնել բառապաշարը, տերևաթափ, բերքահավաք, ոսկե, նախշուն, ամպամած, գույնզգույն, վարդագույն, շագանակագույն, դեղնահեր, սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր բառերով, ամրապնդել ամբողջական նախադասություններով միտքը կապակցված արտահայտելու կարողությունը:

Պարապմունքի ընթացքում կազմակերպվեց զբոսանք մանկապարտեզի մերձակա պուրակում, հողամասում: Զբոսանքի, դիտումների ժամանակ երեխաների ուշադրությունը հրավիրեցինք աշնանային բնապատկերի գեղեցկության, գունային բնորոշ առանձնահատկությունների վրա: Այնուհետև երեխաները ունկնդրեցին աշնանային բնության մեղեդիները՝ քամուց օրորվող ծառերի աղմուկը, թափվող տերևների շրշյունը, չվող թռչունների ճիչերը: Երեխաների ուշադրությունը հրավիրեցինք աշնանային գուներանգներին և առաջադրեցինք հարցեր. նայելով որոշել, թե ո՞ր գույներն են իշխում աշնանային բնապատկերում, ի՞նչ են հիշեցնում այդ գույները, ինչպիսի՞ տրամադրություն և զգացում են արթնացնում դրանք: Երեխաների հետ եկանք եզրահանգման, որ աշնանը բնորոշ են դեղին, նարնջագույն, ոսկեգույն, շագանակագույն, կարմիր գույները և դրանց նրբերանգները և այդ գույները հիշեցնում են արև, կրակ, առաջացնում են ջերմություն, ուրախ, աշխույժ տրամադրություն: Այդ գույներին կարելի է տալ տաք անվանումը:

Խաղ ՝ «Աշուն»

Նպատակ՝ Ամրապնդել երեխաների գիտելիքները բնության աշնանային գույների վերաբերյալ, սովորեցնել տարբերել տերևներն իրենց չափերով և գույներով: Ծանոթացնել տերևաթափ հասկացությանը:

Անհրաժեշտ պարագաներ՝ աշնանային տերևներ:

Խաղի ընթացքը

Ըստ հրահանգի երեխաներն ընտրում և վերցնում են մեկական տերև, որը նախապես հավաքել էին մանկապարտեզի բակից: Նրանցից յուրաքանչյուրԸ ցուցադրում և ներկայացնում է իր ընտրած տերևն ըստ չափի և գույնի: Համեմատում է ծառի տակ թափված տերևները ճյուղերին մնացածների հետ, որոշում, թե տվյալ տերևը որ ծառից է ընկել ցած: Բացատրեցինք երեխաներին, որ տերևները շատ թեթև են և ծառից պոկվելու հետևանքով նրանք օդում մեղմ ճոճվելով թաքփվում են գետնին:

Երեխաները թափահարելով ձեռքերը, վերածվելով թափվող տերևների, վազվզում են:

Լսելով դաստիարակի հրահանգը՝ «Տերևաթափ է, տերևաթափ է, դեղին տերևները թռչում և պտտվում են օդում»: Հրահանգից հետո դեղին տերևներ ունեցող երեխաները պտտվում և հանգիստ կքանստում են:

«Տերևաթափ է, տերևաթափ է, կարմիր տերևները թռչում և պտտվում են օդում»: Հրահանգից հետո կարմիր տերևներ ունեցող երեխաները պտտվում և հանգիստ կքանստում են:

«Քամի բարձրացավ» արտահայտությանը զուգահեռ դաստիարակը թևերը պարզած մոտենում է երեխաներին: Երեխաները ոտքի են կանգնում և քամուց փախչելով, պտտվում են տարբեր կողմերում:

Խաղն ավարտվեց Հռիփսիմե Խրիմյանի «Դեղին տերևիկը» երգով:

Այլընտրանքային նկարչության ընթացքում երեխաները գուաշով ներկելով բնական

տերևը, ստացան գեղեցիկ աշնանային ծառեր:

Պարապմունք 2

Թեմա ՝ «Մրգեր»

Տեսակը՝ դիդակտիկ խաղ

Նպատակը՝

Ընդլայնել երեխաների գիտելիքները մրգերի, դրանց օգտակարության մասին, զարգացնել ստեղծագործական միտքը, նկարագրական խոսքը, հարստացնել բառապաշարը մրգերի անուններով, գնորդ բառով:

Անհրաժեշտ նյութերը՝

Մրգերի նկարներ, թարմ մրգեր

Ընթացքը՝

Սեղանին դասավորեցինք մրգերի նկարներ: Դաստիարակը հանդես եկավ որպես շուկայի վաճառող: Երեխաները հերթով մոտենում են դաստիարակին՝ «շուկայի վաճառողին» և նկարագրում այն միրգը, որը ցանկանում են գնել, օրինակ՝ դեղին, հյութալի, կորիզով, երկու կես է լինում, մայրիկները համով մուրաբա և չիր են պատրաստում այդ մրգից: Մյուսները գուշակում են. եթե ճիշտ են գուշակում, «գնորդը» վերցնում է այդ մրգի նկարը և նստում իր տեղը: Եվ այսպես մինչև բոլոր երեխաները մասնակից լինեն:

2-րդ փուլում դաստիարակը առաջարկում է հանելուկներ:

Ի՞նչն է ալվան

Կարմրաթուշ,

Կորիզն անհամ

Ինքն անուշ:

(դեղձ)

Միրգ է կլոր ու դեղին,

Մեր բոլորի սիրելին,

Պահարանում թե պահես,

Շատ անուշ բույր կտա քեզ:

(սերկևիլ)

Ասես լինի փոքրիկ սնդուկ,

Մեջը՝ կրակ, քաղցրիկ հուլունք:

(նուռ)

Պարապմունք ավարտում ենք շուտասելուկով.

Ձորում ծաղկած խնձորենին

Խնձոր տվեց հնձվորին:

Վերջում համտեսում ենք մրգերը:

Պարապմունք 3

Թեմա - «Թռչուններ»

Նպատակ – Թեմայի ուսումնասիրության ընթացքում ստեղծել պայմաններ ճանաչողական, իմացական և ստեղծագործական կարողությունների զարգացման համար:

Խնդիրներ

- Ձևավորել տարրական պատկերացումներ թռչունների մասին
- Ծանոթանալ դրանց կառուցվածքին, տեղաշարժման ձևերին
- Դաստիարակել հոգատար վերաբերմունք փոչունների նկատմամբ

Մասնակիցներ

- Տարատարիք խմբի երեխաներ
- Խմբի դաստիարակ
- Երաժշտական դաստիարակ

Պարապմունքի սկզբում դաստիարակը պարզեց, թե ինչ թռչուններ գիտեն երեխաները: Այնուհետև առաջարկեց գուշակել հանելուկներ թռչունների մասին և գուշակելու դեպքում ցույց տալ համապատասխան թռչունի նկարը: Նկարներին նայելով՝ երեխաները նկարագրեցին թռչուններին և որոշեցին՝ ճիշտ է արդյոք նկարագրված թռչունը: Ի դեպ,երեխաները տնօրենին իրենց պարապմունքը դիտելու էին հրավիրել նամակատար աղավնու միջոցով:

Երկու սիրուն աչիկ ունի,

Մկրատաձև պոչիկ ունի,

Կուրծքը սպիտակ կաթի նման,

Թևերը սև սաթի նման: (ծիծեռնակ)

Թռչում է, հավ չի,

Լողում է, նավ չի,

Երգում է այն ժամին,

Երբ մոտ է իր մահին: (կարապ)

Կա մի թռչուն բարձրաթռիչք,

Կորակտուց և գիշատիչ,

Եվ ուժեղ է, և սրատես,

Մագիլները՝ թրերի պես: (արծիվ)

Ամեն տարի վաղ գարունքին

Նա իր բույնն է դառնում կրկին,

Որսում օձ, գորտ ու մկներ,

Բարեկամն է վաղուց նա մեր: (արագիլ)

Ո՞ր թռչունն է մեզ հին ընկեր,

Նամակատար, Նամակաբեր,

Նա նշանն է խաղաղության,

Բարեկամն է ողջ մարդկության: (աղավնի)

Երեխաները կատարեցին նաև կառուցողական աշխատանք՝ որպես նյութ օգտագործելով փետուրներ:

Ընթացքում երեխաներն ունկնդրեցին երգ-խաղիկ «Թռչունները և քամին»:

Որպես վերջնարդյունք

Երեխաները ճանաչեցին և անվանեցին մի շարք թռչուններ

Ունեցան տարրական պատկերացումներ թռչունների արտաքին տեսքի և առանձնահատկությունների մասին՝

* մարմնի ձև

* տեղաշարժվելու տարբերակներ

* արձակած ձայներ

* որտեղ և ինչպես են ձմեռում

Թեման ամփոփվեց «Աշունը մեզ հյուր» խորագրով ցերեկույթով, որին ներկա էին երեխաների ծնողները և մանկապարտեզի աշխատակազմը:

Նկարագրությունը.

Նպատակ՝ Երեխաների մեջ զարգացնել շրջապատն ընկալելու ունակությունը, նրանց ուշադրությունը հրավիրել բնության աշնանային փոփոխություններին, բառապաշարում ամրակայել բանջարանոց, այգի, բերքահավաք բառերը:

Գործող անձինք՝ Տարատարիք խմբի սաներ:

Անհրաժեշտ նյութեր և պարագաներ՝

Մրգով և բանջարեղենով լի զանբյուղներ, ավտոմեքենա, վարորդի գլխարկ, նապաստակի և ոզնու զգեստներ, անձրևանոց խաղի համար:

Ընթացքը

Հանգիստ երաժշտության ներքո երեխաները մտնում են դահլիճ:

1. Այս ի՞նչ ձայներ են:

2. Սա աշնանային բնության ձայներն են:

3. Ինչ գեղեցիկ է բնությունը, ոսկե դեղին տերևներով, հասունացած մրգերով և բանջարեղեններով:

4. Իսկ այս ի՞նչ բեռնատար է, տեսնես ու՞ր է գնում:

5. Պապիկ, պապիկ, Այս ու՞ր եք գնում:

6. Գնում ենք աշնանային այգի միրգ բանջարեղեն հավաքելու:

7. Մենք էլ կարո՞ղ ենք միանալ ձեզ:

8. Իհարկե կարող եք, նստեք:

Երաժշտություն

Պապիկ – Երեխաներ դուք գիտե՞ք, որ մարդկանց ողջ կյանքը խիստ ձևով կապված է բնության հետ:

– Այո, մարդիկ ամեն վայրկեան օդ են շնչում, ծարավելիս ջուր են խմում, սնվում են բնության բարիքներով:

- Ինչ մաքուր է օդը այգում: Այստեղ ծառերն են, որ մաքրում են օդը՝ կլանելով նրա մեջ եղած փոշին և թունավոր գազերը:

– Այո, մեր երկիր մոլորակն ամբողջությամբ պատված է թափանցիկ մուշտակով: Իսկ գիտե՞ք ինչ կլինի, եթե հանկարծ այդ մուշտակը անհետանա:

– Այո, երկրագնդի վրա ամբողջ ջուրն ու մյուս հեղուկները կսկսեն եռալ: Արեգակի ճառագայթները կխանձեն ողջ կենդանի բնությունը և ամեն ինչ կամայանա:

Երեխա – Երեխաներ մենք պետք է պահպանենք այս ամենը, որպեսզի ունենանք մաքուր շրջակա միջավայր և ապրենք առողջ:

Ամպրոպի ձայն

Տեղս նեղ է, օգնեցեք,

Հողի տակից հանեցեք:

Թե որ քիչ էլ մնամ ես,

Կչորանամ ախ այսպես:

Վաաաայ, վաաաաայ, վաաաայ.....

Երգ – Անձրև

– Վայ, ինչ գեղեցիկ սունկ է: Ծառը մեծ, սունկը փեքր:

Պար

Աշունն անտես

Մտավ մեր բակ,

Գույն – գույն ներկեց

Այգի, պուրակ:

Հանդում վառեց

Դեղին խարույկ,

Ուրախացան ծեր ու մանուկ:

Երեխա – Երեխաներ, աշունն իր շռայլ վրձնով ներկել է ծառերի տերևները:

Տերև - Մրսում եմ, մրսում

Ծառի վրայից,

Տերևն է ասում:

Քամի ջան, քամի

Շուտ եկ ինձ օգնիր

Որ ծառից իջնեմ

Սպիտակ ու փափուկ

Վերմակով ծածկվեմ:

Տերևները քամու հետ

Պար են բռնել առաջ ետ,

Խշխշում են ու երգում,

Նոր զարդարված պուրակում:

Գալդ բարի այ աշուն,

Ինչ սիրուն ես, ինչ նախշուն:

Այ փոքրիկներ, այ սիրուններ,

Ասաց քամին տերևներին,

Աշուն եկավ, մոտ է ձմեռ,

Ի՞նչ եք դողում ծառի ծերին:

Ոսկի, դեղին, վառ ծիրանի,

Գույներ հագեք խայտաբղետ,

Ու ճյուղերից ձեր մայրենի,

Եկեք ինձ հետ,

Փախեք ինձ հետ:

Տերևները հենց լսեցին

Նախշուն - նախշուն գույներ հագան,

Սվսվալով տխուր երգեր

Քամու թևին թռան փախան:

Պար - տերևներ

Դաշտ ու այգի դեղին հագան,

Ծառ ու ծաղիկ մերկացան,

Թռչունները երամ - երամ

Մեր աշխարհից հեռացան:

Երգ – Ջան աշուն

Աշունը մեզ հյուր է եկել

Տեսեք ինչքան բերք է տվել

Զարդարել է մեզ նոր շորով

Ադամանդե ցող ու շողով:

Լացի ձայն

– Այս ի՞նչ ձայն է տեսնես, ո՞վ է լաց լինում: Ինչու՞ ես լալիս, այ փշոտ ոզնի: Քեզ ո՞վ է նեղացրել:

Ոզնի – ԻՆձ ձեռք մի տուր, այ փոքրիկ: Կծակեմ մատիկդ նուրբ: Մոլորվել եմ այստեղ ես, Չեմ գտնում իմ տունը ես:

– Մենք քեզ կօգնենք, այ ոզնի: Մի վախեցիր դու այդպես: Արի մեր բարիքների քեզ բաժին կհանենք:

Նապաստակը դուրս է գալիս մրգերի զամբյուղից.

– Այ դու շլդիկ նապաստակ, ինչպե՞ս հայտնվեցիր այստեղ:

Նապաստակ – Զամբյուղի մեջ ես բանջարեղեն տեսա և սկսեցի ուտել:

Երեխա – Սխալվում ես նապաստակ, դու հայտնվել ես մրգի զամբյուղում:

Ահա քեզ 2 գազար, Դե շուտ փախիր դու անտառ:

Երգ – Աշուն

Պապիկ – Ի՞նչ նվիրեց մեզ աշունը, երեխաներ:

ՈՒրախություն, գույներ, բերք, բարիք, տերևաթափ, բանջարեղեն, միրգ, թռչունների չու.....

Երգ Աշուն

Պապիկ – Ես էլ ցանկանում եմ, որ բոլոր աշունները խաղաղ լինեն:

Ցերեկույթի ավարտին տնօրենը շնորհակալություն հայտնեց դաստիարակին և երեխաներին կատարված աշխատանքի համար և շեշտեց, որ երեխաները աշունը ներկայացրեցին ընկալելի և պատկերավոր: Դաստիարակը հասել էր իր

առջև դրված խնդիրներին երեխաների համար մատչելի և հետաքրքիր տարբերակով:

Թեմատիկ պարապմունքը նպաստեց զարգացնել գեղեցկությունը գնահատելու, ստեղծագործաբար մտածելու երեխաների կարողությունները, ձևավորեց սեփական մտքերը արտահայտելու կարողությունները, ընդլայնեց երեխաների գիտելիքները աշնան մասին, ստեղծագործական միտքը, երկխոսություն կառուցելու երեխաների կարողությունը: Արդյունքում երեխաների մոտ ձևավորվեցին լեզվական և հաղորդակցական, ճանաչողական և մոտիվացիոն, մաթեմատիկական և տեխնիկական, տնտեսական կարողունակություններ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը սահմանում է հստակ վերջնարդյունքներ, որոնք ուղղված են կարողունակությունների ձևավորմանը: Սա պետք է լինի այն հիմքը, որի շուրջ նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժները պետք է պլանավորեն և կազմակերպեն ուսումնադաստիարակչական աշխատանքը՝ նպատակ ունենալով նախադպրոցական կրթության ավարտին ունենալ ձևավորված կարողունակ անձ և ապահովել սահուն անցումը դպրոցին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

«Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենք.

«Նախադպրոցական մանկավարժություն» - Երևան 2008 թ. /Ս. Մարության, Ա. Դալլաքյան/

Նախադպրոցական կրթության հիմնական ծրագիր միջին խումբ - Երևան 2021թ.

<< Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն>> հիմնադրամ

Նախադպրոցական կրթության հիմնական ծրագիր ավագ խումբ - Երևան 2021թ.

<< Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն>> հիմնադրամ

ՀՀ կառավարության որոշումը նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը հաստատելու մասին, https://lib.armedu.am/files/resource/files/2022-02-24/9368835223ec84664689175ec655a9e8.pdf, ընդ. 13.05.2021

Տոնական Ողողանջներ – Երևան 2011, Լալա Սմբատյան

Խոսքի զարգացման պարապմունքները մանկապարտեզի միջին խմբում – Երևան 2012, Հ. Միտոյան, Լ. Սմբատյան, Լ. Սարգսյան